ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Վ. Վ. ՄԻԿԻՉՅԱՆ

Ստ. Շահումյանը բազմիցս անդրադարձել է արևմտաեվրոպական երկրների նոր պատմության կարևորագույն դեպքերին և տվել դրանց մարքս-լենինյան վերլուծությունն ու գնահատականը։ Հատկապես ուշագրավ են Փարիզի կոմունայի վերաբերյալ նրա արտահայտած մտքերը։ Ինչպես հայտնի է, 1848 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և բոնապարտիստական նոր հեղաշրջումից հետո Ֆրանսիան թևակոխեց երկրորդ կայսրության ժամանակաշրջանը։ Նապոլեոնյան ռեժիմը երկիրը հասցրեց ոչ միայն տնտեսական քայքայման, այլև Սեդանի համազգային աղետին և միջազգային ասպարեզում Ֆրանսիայի հեղինակության անկմանը։

Սեդանի աղետից հետո բուրժուազիայի կազմակերպած «Ազգային պաշտպանության» կառավարությունը ժողովրդից գաղտնի կապիտուլացվեց և գերմանացիների հետ զինադադար ստորագրեց՝ համատեղ ուժերով երկրում ըսկըսված հեղափոխությունը ճնշելու համար։ «Հին ռեժիմի դեմ ապստամբած պրոլետարիատը,— գրում է Վ. Ի. Լենինը,— իր վրա վերցրեց երկու խնդիր՝ համազգային և դասակարգային, այն է՝ Ֆրանսիայի ազատագրումը Գերմանիայի արշավանքից և բանվորների սոցիալիստական ազատագրումը կապիտալիզմից։ Երկու խնդիրների այսպիսի միացումը կոմունայի ամենաօրիգինալ գիծն է կազմում»[1]։

Նորակազմ կառավարությունը, որը գլխավորում էր Թիերը, Բորդոյից տեղափոխվեց Վերսալ։ Այստեղ բուրժուազիան սկսեց հարձակում նախապատրաստել Փարիզի բանվորների և Ազգային գվարդիայի դեմ։ Թիերի գեներալները Փարիզից դուրս էին բերում կանոնավոր բանակի մնացորդները և կենտրոնացնում Վերսալում։ «Այնուհետև գումարվեց ազգային ժողով,— գրում է Ստ. Շահումյանը,— և Թիերը, միանալով ամբողջ ֆրանսիական ռեակցիայի հետ, սպառազինվեց՝ ամբողջ ազգի անունից բանվորներին ճնշելու համար»[2]։

Թիերականների ազգադավ և հակաժողովրդական քաղաքականությունը խթանեց աշխատավորական զանգվածների հեղափոխական եռանդը և 1871 թ. Փարիզում հաղթանակեց աշխարհում առաջին պրոլետարական հեղափոխությունը։ Իշխանությունն անցավ Ազգային գվարդիայի Կենտկոմին։

Անդրադառնալով այդ անցքերին, Ստ. Շահումյանը գրում է. «Ազգային գվարդիան, որն ուներ հեղափոխական ձգտումներով տոգորված հարյուր հազար մարդ, Թիերի աչքի փուշն էր, և նա միջոցներ ձեռք առավ այդ գվարդիան ոչնչացնելու համար։ Ունենալով 25.000 հոգուց բաղկացած ուժ, Թիերը շարժվեց Փարիզի վրա։ Փարիզի պրոլետարիատն ապստամբեց, վռնդեց

---

1 Վ. Ի. Լենին, Փարիզի Կոմունայի մասին, Երևան, 1941, էջ 11։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 248։

թիերի բոլոր կողմնակիցներին և շրջապատված լինելով Վերսալում ամրացած թշնամիներով, նոր կոմունիստական հեղափոխություն հայտարարեց»[3]։

Ազգային գվարդիայի Կենտկոմը հեղափոխության նվաճումները պաշտպանելու նպատակով դիմեց որոշ միջոցառումների։ Սակայն իր գործունեության ընթացքում թույլ տվեց մի շարք ճակատագրական սխալներ, որոնց անդրադարձել է Ստ. Շահումյանը։ «Գրավելով իշխանությունը,— գրում է նա,— Փարիզի բանվորները չձերբակալեցին իրենց թշնամիներին և դրանով չկանխեցին ռեակցիայի հնարավորությունը։ Նրանք չգրավեցին կարևոր կետ Վերսալը, որին տիրելը վճռում էր Փարիզի բախտը»[4]։ Ազգային գվարդիայի Կենտկոմը չկազմակերպեց անհապաղ հարձակում Վերսալի վրա։ Փարիզի բնակչությանն ուղղված նրա կոչում ասվում էր, որ ժողովուրդը պետք է անցնի խաղաղ աշխատանքի, մինչդեռ դասակարգային և ազգային թշնամիները կանգնած էին Փարիզի պարիսպների տակ և նախապատրաստվում էին հարձակման ընդդեմ Կոմունայի։ Բացի այդ, Ազգային գվարդիայի Կենտկոմը փոխանակ ամրապնդելու նվաճած իշխանությունը, ընտրությունների հարցում ցուցաբերեց շտապողականություն, անհարկի վատնելով ժամանակը։ «Բայց գլխավորը,— ընդգծել է Վ. Ի. Լենինը,— ինչ պակասում էր Կոմունային այդ ժամանակն էր, ազատությունը՝ շուրջը դիտելու և սկսելու իր ծրագրի իրագործումը։ Նա դեռ չէր կարողացել գործին ձեռնամուխ լինել, երբ Վերսալում դարանակալած կառավարությունը, պաշտպանություն գտնելով ամբողջ բուրժուազիայի կողմից, ռազմական գործողություններ ըսկըսեց Փարիզի դեմ։ Եվ Կոմունան ստիպված եղավ նախ և առաջ մտածել ինքնապաշտպանության մասին»[5]։

Մարտի 26-ին տեղի ունեցան Կոմունայի ընտրությունները, իսկ մարտի 28-ին՝ հանդիսավոր հռչակումը։ Ազգային գվարդիայի Կենտկոմը հայտարարեց իր լիազորությունների ավարտման մասին և իշխանությունը հանձնեց Կոմունայի խորհրդին, որն իր ձեռքում միավորեց օրենսդիր և գործադիր իշխանությունը։ Ժողովրդի վստահությունը չարդարացրած Կոմունայի խորհրդի անդամը կարող էր ետ կանչվել։ Չնայած անբարենպաստ պայմաններին, Կոմունան իր կարճատև գոյության ընթացքում կարողացավ համառ պայքար ծավալել վերսալցիների դեմ և անցկացրեց սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական բնույթի մի շարք արմատական միջոցառումներ, որոնք «բնութագրում են նրա փսկական իմաստն ու նպատակները»[6]։

Կոմունան հրատարակեց մի շարք դեկրետներ, որոնցով մշտական բանակը փոխարինվեց ժողովրդի սպառազինումով, հետաձգվեց բանվորներից բնակարանային վարձի գանձումը, լոմբարդներից չքավորներին վերադարձվեցին գրավ դրված իրերը, վերացվեց հոգևորականների պետական ռոճիկը, բանվորներին հնարավորություն տրվեց դուրս գալու մութ ու խոնավ ներքնահարկերից և տեղափոխվել Փարիզից փախած հարուստների տները, արգելվեցին բանվորներից գանձվող տուգանքները։ Կոմունան իր ձեռքը վերցրեց ամուսնության, ծննդի և մահվան գրանցումը, եկեղեցին անջատվեց պե-

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 249։

5 Վ. Ի. Լենին, Փարիզի Կոմունայի մասին, էջ 18։

6 Նույն տեղում։

տությունից, դադարեցվեց կրոնի դասավանդումը դպրոցներում։ Շատ վանքեր ու եկեղեցիներ դարձան ժողովրդական ակումբներ, մշակվեց մսուրներ ու մանկապարտեզներ բացելու պլան և այլն։

Փարիզի օրինակով ֆրանսիական պրոլետարական մասսաները փորձեր կատարեցին կոմունաներ կազմակերպել Ֆրանսիայի արդյունաբերական կենտրոններում։ Դրանցից առաջինը հռչակվեց Լիոնում՝ 1871 թ. մարտի 22-ին, բայց գոյատևեց ընդամենը երեք օր։ Մարտի 26-ին կոմունա հռչակվեց Կրեզոյում։ Կոմունաներ հռչակվեցին նաև Թուլուզում, Լիմոժում, Մարսելում և այլուր, սակայն բոլորն էլ ջախջախվեցին։ Շրջապատված լինելով վերսալցիներով և պրուսացիներով, Փարիզի կոմունան չկարողացավ նրանց ցույց տալ էական օգնություն։ Այդ մասին Ստ. Շահումյանը գրում է. «Հեղափոխությունն արձագանք գտավ ամբողջ երկրում, և Փարիզի հեղափոխական պրոլետարիատի բարձրացրած կարմիր դրոշը շատ կողմնակիցներ գտավ։ Բայց անպատրաստ, պետական փորձառություն չունեցող Փարիզի բանվորների բազմաթիվ սխալները ճակատագրական դարձան նրանց համար։ Ամենից առաջ, շնորհիվ այն հանգամանքի, որ Փարիզը պատշաճ կերպով իրեն չկապեց բոլոր գավառների հետ, որոնք հեղափոխական տեսակետից խիստ ետ էին մնացել նրանցից, Թիերին հաջողվեց լիկվիդացնել հեղափոխությունը գավառներում և նրանց կտրել Փարիզի ազդեցությունից, գերմանացիների հետ միասին շրջապատելով այն»[7]։

Կոմունան փորձեց ստեղծել բանվորների և գյուղացիների դաշինք։ Կոմունայի խորհուրդը կոչերով դիմեց Ֆրանսիայի գյուղացիությանը՝ ձգտելով նրանց պայքարի հանել հեղափոխության համար։ Դրանցում ընդգծվում էր, որ «Փարիզը գյուղացիների համար հող է ուզում, բանվորների համար՝ աշխատանքի գործիքներ»։ Սակայն Կոմունային այդպես էլ չհաջողվեց դաշինք ստեղծել բանվորների և գյուղացիների միջև։ Մարտական պրոլետարական կուսակցության բացակայությունը խիստ բացասաբար անդրադարձավ Կոմունայի ամբողջ գործունեության վրա։ Պայքարը բլանկիստա-յակոբինյան «մեծամասնության» և պրուդոնիստական «փոքրամասնության» միջև, որը ծավալվեց Կոմունայի ընտրություններից անմիջապես հետո, նպաստավոր պայմաններ ստեղծեց Կոմունայի թուլացման համար։

Կոմունայի խոշոր սխալն այն էր, որ այն չգրավեց ֆրանսիական բանկը, որը պրուդոնիստ «փոքրամասնությունների» բռնած դիրքի արդյունք էր։ Այն իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում բանկից վերցրեց 16, իսկ վերսալցիները՝ 257 մլն. ֆրանկ։ «Կոմունայի գոյության ամբողջ ընթացքում,— գրում է Ստ. Շահումյանը,— Փարիզում հաշտվողական ոգի էր տիրում և պատերազմի մարտական մոմենտում հեղափոխության առաջնորդները զբաղվեցին սոցիալ-տնտեսական բնույթի մանր հարցերով։ Կոմունան բոլորովին ձեռք չտվեց պետական բանկերին, ուր միլիոններով փող կար»[8]։

Թիերի կառավարությունը, նախապատրաստվելով գրոհի Փարիզի վրա, այնտեղ ծավալել էր դիվերսիոն և լրտեսական աշխատանք։ Թիերի գործակալները թափանցել էին նույնիսկ Կոմունայի պաշտպանության գլխավոր շտաբ և վերսալցիներին հանձնել Փարիզի պաշտպանության ամրապնդման

---

7 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 248—249։

8 Նույն տեղում, էջ 249։

պլանը։ Ապրիլի 17-ին պայթեցվեց ռամփուշտի և վառոդի գործարանը։ «Նման ռազմական ու տնտեսական սխալների հետևանքով,—գրում է Ստ. Շահումյանը,— Կոմունայի ուժերը աստիճանաբար թուլանում էին, և երեք ամսվա ընթացքում այդ ուժերն այնքան հալվեցին, որ հեղափոխությանը հավատարիմ զորքերում մնաց միայն 20 հազար մարդ, մինչդեռ Թիերի զորքը հասավ 130 հազար մարդու։ Կոմունիստական Փարիզի դրոշի դեմ Թիերին օգնության եկավ ամբողջ եվրոպական ռեակցիան»[9]։

1871 թ. մայիսի 10-ին Թիերի և պրուսական կառավարության ներկայացուցիչները կնքեցին ֆրանսիական ժողովրդի համար խայտառակ և ստորացուցիչ հաշտություն, որի համաձայն Գերմանիան ստացավ Էլզասն ու Լոթարինգիայի արևելյան մասը և հինգ միլրդ. ֆրանկ (ոսկով) ռազմատուգանք։ Ֆրանսիական բուրժուազիան այդ ստորացուցիչ պայմանների հետ համաձայնվեց, որպեսզի գերմանացիների հետ համատեղ տապալի աշխարհում առաջին պրոլետարական հեղափոխությունը։ «Երբ Փարիզի պրոլետարիատը ազատագրական շարժում սկսեց,—գրում է Ստ. Շահումյանը,—Թիերը դիմեց գերմանական սվիններին օգնությանը, և Բիսմարկի հետ կնքած բլոկը գործիք դարձավ բանվորական ապստամբությունը ճնշելու համար»[10]։ Չպետք է մոռանալ նաև այն, որ Բիսմարկը սահմանված ժամկետից շուտ արձակեց գերված ֆրանսիական հարյուր հազարանոց բանակը, որը դրվեց Թիերի տրամադրության տակ։ Տենդագին նախապատրաստությունից հետո, մայիսի 20-ին, վերսալցիները ձեռնարկեցին վճռական հարձակում հեղափոխական Փարիզի վրա և մայիսի 21-ին մտան մայրաքաղաք։ Փարիզի փողոցներում կոմունարների հերոսական պայքարը պատմության մեջ մտավ որպես բանվոր դասակարգի գործի համար մարտնչողների հերոսության փայլուն օրինակ։ Պայքարն առանձնապես լարված և կատաղի բնույթ էր կրում Կոմունայի վերջին օրերին, որը հայտնի է «արյունոտ մայիսյան շաբաթ» անունով։ Մի ամբողջ շաբաթ Փարիզի պրոլետարիատը պաշտպանվում էր վերսալյան դահիճներից։ Կոմունայի վերջին հենակետը Պեր-Լաշեզ գերեզմանատունն էր, որտեղ մայիսի 27-ին կռվում էին շուրջ 200 կոմունարներ։ Մայիսի 28-ին ընկավ վերջին բարիկադը։ 30 հազար կոմունարներ մահապատժի ենթարկվեցին, ավելի քան 45 հազար բանվորներ բանտեր նետվեցին կամ աքսորվեցին հեռավոր գաղութները։ Բանտարկվածների թվում կային հազարից ավելի կանայք և 650 երեխա։

«Հրեշավոր, վայրենի էր Թիերի դատաստանը Փարիզի հեղափոխական պրոլետարիատի նկատմամբ,— գրում է Ստ. Շահումյանը։—Այն խաղաղասիրության փոխարեն, որը պաշարման օրերին Կոմունան կիրառում էր նույնիսկ պատանդների նկատմամբ, Թիերը սարքեց այնպիսի հրեշավոր սպանդ, որի հանդեպ խամրում են քրիստոնեական պատերազմների և բարդուղիմեոսյան գիշերվա պատկերները։ Մի ամբողջ շաբաթ Փարիզի փողոցներում գետի պես արյուն էր հոսում։ Թիերի հրամանով 30 հազար բանվոր գնդակահարվեց»[11]։

Փարիզի կոմունան ցնցեց ամբողջ աշխարհը՝ ահ ու սարսափ տարածելով շահագործող բուրժուական շրջաններում, որոնք սկսեցին հերյուրանքներ

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում, էջ 248։

11 Նույն տեղում, էջ 249։

տարածել Կոմունայի և կոմունարների հասցեին։ Այդ առթիվ Ստ. Շահումյանը նկատում է. «Ամբողջ բուրժուական մամուլում դուք կգտնեք այս սարսափների հանցանքը բանվորների ուսերին գցելու փորձեր։

Բայց նույն այն ժամանակ, երբ բուրժուական պատմությունը, գիտությունն ու մամուլն ատելություն են տածում դեպի Կոմունայի օրերի վերհուշերը, համաշխարհային պրոլետարիատը խոնարհվում է այդ մարտիկների հիշատակի առջև, և մարտի 18-ի օրն աշխատավոր մասսաների տոնն է»[12]։

Հեղափոխական տեսությամբ զինված բանվոր դասակարգի մարտական կուսակցության բացակայության հետևանքը եղավ այն, որ Ազգային գվարդիայի Կենտկոմը և Կոմունայի խորհուրդը թույլ տվեցին բազմաթիվ սխալներ, որոնք ճակատագրական նշանակություն ունեցան Կոմունայի համար։ Սակայն, սխալ կլիներ կարծել, թե Փարիզի կոմունան՝ աշխարհում առաջին պրոլետարական հեղափոխությունը, պարտվեց լոկ սուբյեկտիվ պատճառների՝ կոմունարների թույլ տված սխալների հետևանքով։ Ստ. Շահումյանի կարծիքով՝ «Փարիզյան Կոմունան ցանկանում էր ստիպել եվրոպական հասարակությանը գործելու սոցիալիստականորեն, բայց պարզվեց, որ տնտեսական զարգացման այն աստիճանին, հասարակության արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների այն վիճակի օրով սոցիալիստական հեղափոխությունն անհնարին էր։ Եվ այդ պատճառով Փարիզյան Կոմունան իր նպատակին չհասցրեց և այնպիսի ողբերգական վախճան ունեցավ»[13]։

Ստ. Շահումյանը Փարիզի կոմունան որպես սոցիալիստական հասարակարգի հաստատման պետական ձևի, հակադրում է բուրժուական պետությանը, և, ընդհանրապես, կապիտալիստական հասարակարգին, որտեղ իշխում են մարդու շահագործումը, ապօրինությունն ու ոճրագործությունը։ «1871 թ. Կոմունայի ժամանակ,— գրում է Ստ. Շահումյանը,— երբ ապագայի ազատ պետությունն ասուպի նման, կարճ ժամանակով շողացել է Եվրոպայի հորիզոնի վրա, Փարիզում երեք ամսվա ընթացքում տեղի չի ունեցել ո՛չ մի գողություն, ո՛չ մի ոճրագործություն»[14]։

Փարիզի կոմունան չնայած իր կարճատև գոյությանը, խոշոր նշանակություն ունեցավ միջազգային պրոլետարիատի հետագա հեղափոխական պայքարի գործում։ Կոմունայի մարտիկները պայքարում և մեռնում էին հանուն ամբողջ աշխարհի ճնշվող ու շահագործվող դասակարգերի, հանուն նրանց ազատ ու երջանիկ կյանքի։ Այդ տեսակետից Կոմունայի գործը անմեռ է և կապրի հավիտյան։ Ստ. Շահումյանն ընդգծում է, որ Կոմունայի «զոհերը ոգևորեցին բանվորներին, երկար տարիներ հույս ներշնչեցին նրանց, և այժմ, ժամանակակից հեղափոխությունում, մենք առաջին անգամ տեսնում ենք Փարիզի կոմունարների իդեալը կյանքում մարմնացնելու փորձեր»[15]։

Կոմունայի օրինակը խոշոր ազդեցություն թողեց միջազգային և ռուսական պրոլետարիատի հեղափոխական շարժման վրա։ «Ռուս բանվորը,— գր-

12 Նույն տեղում, էջ 249—250։

13 Ստ. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1953, էջ 18։

14 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 57։

15 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 250։

ռում է Ստ. Շահումյանը,— իր աչքի առաջ ունենալով արևմտաեվրոպական հեղափոխությունների փորձը, սոցիալական շարժման ներդաշնակ զարգացած գիտությունը, ավելի հաստատակամ ու հմտորեն է գործի ձեռնարկում, և նրան չի կարող սպասել Փարիզի բանվորների բախտը, որովհետև ամբողջ Եվրոպան հասել է կապիտալիզմի անհերևակայելի զարգացման, որը սոցիալական հեղաշրջման նախապայմանն է»[16]։

Համեմատելով Հոկտեմբերյան սոցիալիստական և 1871 թ. մարտի 18-ի պրոլետարական հեղափոխությունները, Ստ. Շահումյանը նշում է, որ «Ռուսական կոմունիստական հեղափոխությունը իր բախտով այլ է, քան ֆրանսիական հեղափոխությունը, որովհետև, եթե Փարիզը շրջապատված էր ֆեոդալական հետամնաց գավառներով և խոշոր ֆեոդալական պետություններով, ապա ներկայումս ռուս պրոլետարիատը շրջապատված է համաշխարհային պրոլետարիատի եղբայրական ընտանիքով, պրոլետարիատ, որը ձգտում է դուրս պրծնել իրեն կաշկանդող հարստահարիչների ճանկերից և օգնության դալ մեզ»[17]։

Ստ. Շահումյանը համեմատելով այն միջազգային հարաբերությունները, որոնց պայմաններում տեղի ունեցան Փարիզի կոմունան և Հոկտեմբերյան հեղափոխությունը, ընդգծում է, որ վերջինս կատարվեց անհամեմատ նպաստավոր պայմաններում, որ իմպերիալիստական հակասությունները մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի և Գերմանիայի միջև զրկեցին նրանց սերտորեն համախմբվելու և միասնական ուժերով Հոկտեմբերյան հեղափոխությունը խեղդելու հնարավորությունից։ «Մեզ փրկում է,— նկատում է Ստ. Շահումյանը,— երկու աշխարհների՝ Անգլիայի և Գերմանիայի միջև տեղի ունեցող իմպերիալիստական մրցությունը։ Եթե այդ պետությունների զավթողական ձգտումները այնքան հակադիր չլինեին, եթե դրանք այնքան սրված չլինեին, անտարակույս, ամբողջ արևմտաեվրոպական իմպերիալիզմը սերտորեն կհամախմբվեր՝ Արևելքում հեղափոխական շարժման դեմ պայքարելու և այն լիկվիդացնելու համար»[18]։

Ստ. Շահումյանը վերլուծում է նաև դասակարգային ուժերի հարաբերակցությունը Ֆրանսիայում՝ Փարիզի կոմունայի և Ռուսաստանում՝ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանում ու հանգում այն հետևության, որ սովետական իշխանությունն ամուր է, որ տապալված դասակարգերն ի վիճակի չեն վիժեցնելու հեղափոխության նվաճումները, որովհետև «Ռուսաստանի բնակչության հսկայական մեծամասնությունը կազմում են հենց այն գյուղացիությունն ու բանվորները, որոնց կամքով է գործում այդ իշխանությունը»[19]։

Ստ. Շահումյանի ղեկավարած Բաքվի սովետում հակահեղափոխական ուժերի նկատմամբ հաշտվողական ոգի գոյություն չուներ, ինչպիսին կար Փարիզի կոմունայում վերսալցիների նկատմամբ։ Նա Բաքվի պրոլետարիատին զգուշացնում էր հակահեղափոխական վտանգի մասին և միջոցներ ձեռնարկում հեղափոխական ուժերի ստեղծման և ամրապնդման համար։

---

16 Նույն տեղում, էջ 250—251։

17 Նույն տեղում, էջ 251։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 252։

Այսպիսով, Ստ. Շահումյանը քանիցս անդրադարձել է Փարիզի կոմունայի պատմությանը, տվել փարիզյան դեպքերի մարքս-լենինյան վերլուծությունն ու գնահատականը և դրանք օգտագործել իր պրակտիկ հեղափոխական գործունեության ընթացքում։

СТЕПАН ШАУМЯН О ПАРИЖСКОЙ КОММУНЕ

В. В. МИКИЧЯН

Резюме

Соратник В. И. Ленина и руководитель Бакинской коммуны Степан Шаумян глубоко изучал историю Парижской коммуны, давал марксистско-ленинскую характеристику борьбе французского пролетариата. Он резко критиковал предательскую деятельность буржуазии и с воодушевлением говорил о революционной борьбе народных масс. В своих выступлениях Ст. Шаумян отмечал нерешительность, медлительность и ошибки руководителей коммуны, которыми воспользовалась реакция и подавила первую в мире пролетарскую революцию.